Հայ գրատ.
7/5/33.
269
520 ք

ԱՌԻՍԱՀԱՑՈՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

ԿԱՆՈՆՆԵՐ, ՀՐԱՀԱՆԳ, ԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՒ ՕՐԱԿԱՐԳ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի Հայ Միշկուսակցական Խորհրդի

ԹԻՖԼԻՍ
Типографія „Экономія“ Б.-Ванкская № 3.
1917. թ.

48305

ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

I

ԿԱՆՈՆՆԵՐ

1. Իւրաքանչիւր ռուսահայ՝ 20 տարին լրացրած՝ առանց սեռի և դաւանութեան խտրութեան, իրաւունք ունի մասնակցելու պատգամաւորների ընտրութեանը որպէս ընտրող և ընտրվող։ Գարնիզոններում և առհասարակ ընտրաշրջաններում գտնվող հայ զինվորները ընտրութիւններին մասնակցում են ընդհանուր հիմունքներով։

Ծանօթ.—1 Զօրաճակատներում և մօտաւոր թիկունքներում գտնվող հայ զինվորների՝ ընտրութեան մասնակցելու հարցը, որոշվելուց յետոյ, առանձին կը յայտարարվի։

Ծանօթ.—2 Ընտրութիւններին մասնակցելու, ընտրելու և ընտրվելու իրաւունք ունեն նաև ոչ ռուսահպատակ այն հայերը, որոնք ներկայ պատերազմից առաջ բնակութիւն են հաստատել Ռուսաստանում։

2. Պատգամաւորների ընտրութիւնը կատարվում է ընդհանուր, հաւասար, համեմատական (պրոպորցիոնալ), անմիջական և գաղտնի ձայնաւորութեամբ։

3. Ռուսահայ ժողովրդի իւրաքանչիւր 10,000 հոգուց մէկ պատգամաւոր է լի-

48305
520

նելու։ Ընտրական շրջաններում ընտրելի պատգամաւորների թվի մասին տես 8ուցակ ընտրական շրջանների։

4. Իւրաքանչիւր ընտրող կարող է ունենալ միայն մէկ ձայն։ Իւրաքանչիւր ընտրող իր ընտրողական իրաւունքը կարող է գործադրել միայն մէկ ընտրական շրջանում։ Ընտրվել կարող են մարդիկ անկախ այն հանգամանքից, թէ որ ընտրական շրջանում են ընակվում։

5. Ընտրութիւնը կատարելու կարգերը որոշված են ստորև առաջ բերված Ընտրական հրահանգով։

6. Ընտրութիւնները կազմակերպելու, կարգադրելու և վարելու համար հաստատվում են՝ կենտրոնական յանձնաժողով Թիֆլիսում, այլ և 11 շրջանային ընտրական յանձնաժողովներ՝ շրջանների կենտրոններում (տես 8ուցակ ընտր. շրջանների), որոնք բաղկացած են հայ քաղաքական կազմակերպութիւնների ներկայացուցիչներից, թվով 5—7 հոգի։

Ծանօթ.—Ընտրական շրջանների ցուցակում՝ իւրաքանչիւր շրջանակի դէմ նշանակված պատգամաւորների թվերը (օրինակի՝ Երևան քաղաք 4, Երևանի գաւառ՝ 7, և այլն) չեն նշանակում, թէ իւրաքանչիւր շրջանակ պէտք է այդքան թվով պատգամաւոր ընտրէ իր կողմից, այլ այդ թվերը բերված են միմիայն ցոյց տալու համար, թէ քանի հիման վրա և քանի առանձնից է ստացվել ամբողջ շրջանի պատգամաւորների թիւը (40)։ Ուրեմն՝ 11

ընտրական շրջաններից իւրաքանչիւրը կազմում է միայն մէկ ընտրական մ/ուԹիւն, այսինքն՝ այդ շրջաններից իւրաքանչիւր մէկում ձայնավուԹեան են ենԹարկվում նոյն այդ ամբողջ շրջանի համար կուսակցուԹիւնների կողմից առաջարկված անուանացուցակները, որոնք պարունակում են այդ շրջանի համար պահանջվող Թեկնածուների ԹիւրԹ.(ԸնտրուԹեան մանրամասնուԹիւնները տես «Հրահանգում»։

7. Կենտրոնական ընտրական յանձնաժողովը Թիֆլիսում

ա) Հսկում է ընտրուԹիւնների կանոնաւորուԹեան վրայ ամենուրեք ընդհանրապէս.

բ) Լուծում է սոյն կանոնադրուԹեան և ընտրական հրահանգի գործադրման առիԹով ծագող տարակուսանքները ու բացատրուԹիւն է տալիս։

գ) Հարկաւոր հրահանգներ է տալիս շրջանային յանձնաժողովներին։

դ) Շրջանային յանձնաժողովների գեկուցագրի հիման վրայ կազմում և հրատարակում է պատգամաւոր ընտրվածների ընդհանուր ցուցակը։

8. Իւրաքանչիւր ընտրող ինքն անձամբ պէտք է տայ իր ձայնը։

9. ԸնտրուԹիւնների անկանոնուԹիւնների դէմ բողոքները, հարկաւոր բացատրուԹիւններով հանդերձ, տրվելու են ընտրական շրջանակային յանձնաժողովներին՝ ընտրուԹիւնը կատարելուց յետոյ երեք օրվայ ընԹացքում։ Այդ բողոքները

յիշեալ յանձնաժողովները կենտրոնական ընտրական յանձնաժողովի միջոցով ներկայացնում են ռուսահայոց համագումարին, որից և կախված է պատգամաւորների ընտրուԹիւնների ընդունուԹիւնը, ստուգումն ու վաւերացումը։

II.

ԸՆՏՐԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ

1. Ռուսահայոց Համագումարի ընտրուԹիւններին չեն մասնակցում միայն դատարանի վճռով ազատուԹիւնից զրկվածները։

2. Որպէսզի յարմարուԹիւն ստեղծվի ընտրողների համար, աւելի հեշտուԹեամբ տալու իրանց ձայնը՝ մեծ քաղաքները (օր. Թիֆլիս, Բագու...) կարելի է բաժանել մի քանի ընտրական շրջանակների (Թաղերի)։

3. ԸնտրուԹիւնները ամենուրեք կատարվում են նոյն օրը,—կիւրակի, յուլիսի 23-ին։ Այդ օրը ընտրական յանձնաժողովները բաց են, ընտրական ԹերԹեր ընդունելու համար, առաւօտեան ժամը 9-ից մինչև երեկոյեան ժամը 6-ը։

4. Յուլիսի 10-ից ոչ ուշ կուսակցուԹիւնները կամ ՀամբակցուԹիւնները, իւրաքանչիւրն իր կողմից, պէտք է շրջանային ընտրական յանձնաժողովներին ներկայացնեն պատգամաւորական Թեկնածուների անուանացանկ՝ առանձին ԹերԹերով։ Այդ

թերթերում առաջ բերված թեկնածուների թիվը չը պէտք է աւելի լինի ամբողջ շրջանի կողմից ընտրվելիք պատգամաւորների թվից, օրինակ՝ Երևանի շրջանի համար ոչ աւելի քան 46 անուն, Թիֆլիսի շրջանի համար ոչ աւելի քան 40, և այլն)։ Աւելի անուններ պարունակող ցուցակների մէջ հաշվի չեն առնվելու վերջին անունները։

Որևէ ընտրական շրջանի համար պատգամաւորների անուանացանկ առաջարկողները պէտք է ստորագրեն իրանց առաջարկած ցուցակը և լինեն ոչ պակաս քան առաջարկված պատգամաւորների թվի կէսը։

Իւրաքանչիւր առաջարկված անուանացանկ պէտք կրէ իրրև վերնագիր այն կուսակցութեան կամ խմբակցութեան անունը, որի կողմից առաջարկվում է։

5. Այս պայմաններին համապատասխանող անուանացանկերը իւրաքանչիւր շրջանի ընտրական յանձնաժողովի կողմից պէտք է յայտարարվեն ի դիտութիւն ընդհանուրի՝ ամբողջ ընտրական շրջանի սահմաններում՝ այն հաշվով, որ ընտրութիւնից գոնէ 3 օր առաջ յայտնի լինեն ընտրավայրերին։

6. Իւրաքանչիւր շրջանի ընտրութիւնները կազմակերպելու համար՝ այդ շրջանների կենտրոններում կան միջկուսակցական շրջանային յանձնաժողովներ։

7. Շրջանային յանձնաժողովները իրանց կողմից կազմակերպում են շրջանա-

կային ընտրական յանձնաժողովներ, որոնք կազմակերպում և ղեկավարում են շրջանակներում (գիւղ, քաղաք) ամբողջ շրջանակի ընտրական գործը։

8. Զայն տալ կարելի է պատգամաւորական թեկնածուների՝ ամբողջ շրջանի համար առաջարկված անուանացուցակներից մէկին միայն։ Ընտրութիւնը կատարվում է գաղտնի, ընտրական տոմսի յանձնումով։

9. Ամեն մի ընտրական տոմսի վրա պէտք է տպագրված կամ գրված լինի մի որևէ կուսակցութեան կամ խմբակցութեան անուն միայն։ Բոլոր տպագրված տոմսերը, ինչ կուսակցութեան կամ խմբակցութեան էլ պատկանելիս լինեն, պէտք է լինեն՝ միաձև, միաչափ և միևնոյն թղթի վրա միևնոյն տառերով տպագրված։ Դրանք կը պատրաստվեն Թիֆլիսում, որտեղից և կը ցրվեն շրջանները։ Ամեն մի ընտրող իր ցանկացած ընտրատոմսը անձամբ ծալած տալիս է յանձնաժողովի նախագահին, որն և ընտրողի ներկայութեամբ գցում է կընքած արկղի մէջ։ Այս պահանջներին չը համապատասխանող ընտրատոմսերը հաշվի չեն առնվում։

10. Ընտրութիւնների կանոնաւորութեան վրա հսկում է յանձնաժողովը, որը պէտք է հետևի, որ ընտրութեան ատենում միայն ընտրատոմսեր տրվեն, և թույլ չը տրվի նախընտրական պայքար, ինչպէս

և որևէ ձևով չը խանգարվի ընտրութեանց կանոնաւորութիւնը։

11. Զայնավորեան յաջորդ օրը, բաց նիստում, ներկայութեամբ այդպէս գտնվող ընտրողների՝ ընտրական յանձնաժողովը հաշվում է, թէ որչափ ձայն է ստացել ամեն մի կուսակցութիւն կամ խմբակցութիւն։ Հետևանքները գրի են առնվում արձանագրութեան մէջ, որ և ստորագրում են նախագահը և յանձնաժողովի անդամները։ Այդ արձանագրութիւնները բոլոր վայրերի յանձնաժողովները անմիջապէս ուղարկում են իրանց շրջանակային յանձնաժողովներին, որ և գարձեալ պաշտօնական նիստում կատարում է ամբողջ շրջանակի ձայնաւորեան հաշվումը և գրի անցնում հետևանքները ու անմիջապէս ուղարկում է շրջանային ընտրական յանձնաժողովին։

12. Շրջաններում պատգամաւորները ընտրվում են համեմատական սկզբունքով (տես յօդուած 13)։

13. Ընտրական շրջանային յանձնաժողովները ստանալով շրջանակներից ձայնավորեանց հետևանքները՝ ձևնարկում են ընտրութեան հետևեալ կերպով։

Իւրաքանչիւր ընտրական շրջանում ընտրվելիք բոլոր պատգամաւորների թիւը բաղմապատկում են այս կամ այն խմբակցութեանը տրված ձայների թվի վրայ և արտադրեալը բաժանում ամբողջ շրջանում անխտիր բոլոր անուանացանկերին տրված ձայների թվի վրայ։ Այդ ձևով ստացված

թիւը ցոյց կը տայ, թէ ամեն մի խմբակցութեան կողմից ներկայացված անուանացանկից քանի հոգի են ընտրված, հաշվելով ըստ համապատասխանութեան կարգի, սկսած առաջին թեկնածուից։ Եթէ ամբողջ շրջանում ընտրված պատգամաւորների թիւը պակաս լինի պահանջված թվից, այդ պակասը կը լրացվի մնացորդներով, սկսած ամենամեծ մնացորդից։

Ծան.—Այս յօդվածը աւելի պարզ կացուցանելու համար առաջ ենք բերում հետևեալ օրինակը։

Ամբողջ Երևանի շրջանում պէտք է ընտրվի 46 պատգամաւոր։ Ենթադրենք, թէ այդ ամբողջ շրջանում տրված բոլոր ձայների թիւն է 116,560։ Ասենք թէ՝ մասնակցել են 5 կուսակցութիւն։

Ա.	կուսակցութիւնը	ստացել է	35,846	ձայն
Բ.	»	»	31,220	»
Գ.	»	»	25,438	»
Դ.	»	»	20,309	»
Ե.	»	»	3,747	»
		Ընդամենը՝	116,560	ձ.

Այժմ, իմանալու համար, թէ որ կուսակցութիւնը քանի պատգամաւոր կունենայ, կը կատարենք հետևեալ գործողութիւնները։

Ա. կուս. 35,846×46=1.648,916:116,560=
=14+ մնաց. 17,076

Բ. » 31,220×46=1.436,120:116,560=
=12+ մնաց. 37,400

Գ. » 25,433×46=1.170,208:116,560=
=10+ մնաց. 4,548
Դ. » 20,309×46— 934,214:116,560=
= 8+ մնաց. 1,734
Ե. » 3,747×46= 171,362:116,560=
= 1+ մնաց. 55,802

Ընդամենը 45 պատգամաւոր.

Պակասած մէկ պատգամաւորն ընտրըվում է Ե. կուսակցութիւնից, որ ամենից մեծ մնացորդն ունի։

Այս կերպով՝

Ա.	կուսակցութիւնը տալիս է՝	14	պատ.
Բ.	»	12	»
Գ.	»	10	»
Դ.	»	8	»
Ե.	»	(1+1) 2	»

14. Շրջանային ընտրական յանձնաժողովները կազմում են արձանագրութիւն, որի մէջ գրվում է նիստի տեղը, ժամանակը, ամբողջ շրջանում ընտրութեան մասնակցածների թիւը և եղած բողոքները։ Արձանագրութիւնը կարդացվում է բաց նիստին, ստորագրվում և հաստատվում յանձնաժողովի անդամների և քարտուղարի կողմից։

15. Ընտրութեան հետևանքները շրջանային յանձնաժողովները 3 օրվայ ընթացքում առանձին զեկուցագրով ուղարկում են Թիֆլիս, կենտրոնական ընտրական յանձնաժողովին։ Նոյն շրջանային

յանձնաժողովները պատշաճ վկայական են տալիս ընտրված պատգամաւորներին։ Բողոքներ եղած դէպքում ուղարկվում են ազգային համագումարի դիւանի անունով։

16. Ընտրութեանց ընթացքը ըստ կարելոյն փութացնելու նպատակով սահմանվում է հետևեալ կարգը։ Քաղաքացիութեան հետևանքը շրջանակի ամեն մի վայրից հասցնում են (լաւ է՝ մարդու միջոցով) շրջանակային յանձնաժողովին՝ մինչև յուլիսի 27-ը։ Շրջանակային յանձնաժողովը յուլ. 29-ին իր շրջանակի բոլոր վայրերից ստացված ընտրութիւնների հիման վրայ՝ հաշվում է ամբողջ շրջանակում իւրաքանչիւր կուսակցութեան կամ խմբակցութեան տրված ձայների թիւը, գրի է առնում և արձանագրութիւն կազմում ու մարդու ձեռքով կամ հեռագրով հետևանքները հաղորդում շրջանային ընտրական յանձնաժողովին։ Վերջինս էլ օգոստոսի 3-ին ամբողջ շրջանի բոլոր շրջանակներից ստացված ընտրութիւնների կամ հեռագրական տեղեկութեանց հիման վրայ հաշվում է թէ ամբողջ շրջանում, միասին առած, այս կամ այն կուսակցութեանը որչափ ձայն է տրված։ Այսպիսով՝ յօդ. 13-ի հիման վրայ շրջանային ընտրական յանձնաժողովը որոշում է, թէ իր ամբողջ շրջանում քանի պատգամաւոր է ընտրված ամեն մի կուսակցութիւնից։ Յանձնաժողովները ոչ ուշ քան օգոստոսի 5-ին պաշտօնապէս յայտնում են ընտրված պատգամաւորներին նը-

բանց ընտրութեան մասին, իսկ ուրիշ քաղաքներում գտնվածներին հեռագրով. ընտրութիւնների արձանագրութիւնները, գործավարութիւնները պատգամաւորների միջոցով կամ այլ եղանակով ուղարկվում են Համազգային դիւանին։

Այսպէս վարվում են 1-ից մինչև 8 ընտրական շրջաններում (տես ընտր. շրջանների ցուցակը)։ Իններորդ (Դաղստանի), 10-րդ (Ատրպատականի) և 11-րդ (Բեսարաբիայի) շրջանների շրջանակներից, վայրերի հեռաւորութեան պատճառով, ձայնտվութեանց հետևանքները իրանց շրջաններն ընտրական յանձնաժողովներին հաղորդում են անպայման հեռագրով։

Որոշված օրերին տեղ չը հասած ընտրաթերթերը կամ տեղեկութիւնները այլևս նկատի չեն առնվում։

Դիւան Ռուսահայոց Համազգային Կազմակերպիչ Միջկուսակցական Խորհրդակցութեան։

Դիւանի հասցէն՝ Тифлисъ, Бебутовская, Анановское училище, Бюро междупартійнаго Совѣщанія.

ՑՈՒՑԱԿ

ԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՒ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ *)

1. ԵՐԵՒԱՆԻ ՇՐՋԱՆ. Կենտրոն Երևան.

(Շրջանակներ.—1. Երևան քաղաք, 2. Երևանի գաւառ, 3. Նոր-Բայազէտ՝ գաւառով, 4. Հին-Նախիջևան՝ գաւառով, 5. Վաղարշապատ՝ Էջմիածնի գաւառով, 6. Իգդիր՝ Սուրմալուի գաւառով, 7. Շարուր-Դարալագեազ). 46 պատգամաւոր։

2. ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ ՇՐՋ. Կենտր. Ալէքս.

(Շրջանակներ.—1. Ալէքսանդրապոլ քաղաք, 2. Ալէքսանդրապոլի գաւառ). 19 պատգամաւոր։

3. ՂԱՐՍԻ ՇՐՋԱՆ.. Կենտրոն Ղարս.

(Շրջանակներ.—1. Ղարս, Օլթի, Արդահան, 2. Ղարսի գաւառ, 3. Կաղզվան քաղաք, 4. Կաղզվանի գաւառ). 18 պատգամաւոր։

---

*) Ծանօթ.—Առաջին անգամ հրատարակված և գրված ցուցակում բերված էին իւրաքանչիւր շրջանակի հայ ազգաբնակութեան թիւը և քանի պատգամաւոր է ընկնում իւրաքանչիւր շրջանակի վրայ։ Ներկայ ցուցակից այդ տեղեկութիւնները դուրս ձգեցինք, որպէսզի տեղիք չը տրվի կարծելու, թէ իւրաքանչիւր շրջանակ նշանակված թիւով պատգամաւոր պիտի ընտրէ իր կողմից։

4. ԹԻՖԼԻՍԻ ՇՐՋԱՆ. Կենտրոն Թիֆլիս.

(Շրջանակներ.—1. Թիֆլիս քաղաք, 2. Թիֆլիսի գաւառ, 3. Ախալցխա՝ գաւառով, 4. Գորի և Դուշէթ, 5. Գորիայ գաւառը, 6. Սղնախ՝ գաւառով, 7. Թելաւ՝ գաւառով, 8. Ախալքալաք՝ գաւառով, 9. Բորչալու գաւառ). 40 պատգամաւոր։

5. ՇՈՒՇՎԱՑ ՇՐՋԱՆ. Կենտրոն Շուշի.

(Շրջանակներ.—1. Շուշի՝ գաւառով, 2. Գեօրիս և Զանգեզուր, 3. Կարեազինի գաւառ). 32 պատգամաւոր։

6. ԳԱՆՁԱԿԻ ՇՐՋԱՆ. Կենտր. Գանձակ.

(Շրջանակներ.—1. Գանձակ՝ գաւառով, 2. Նուխի՝ գաւառով, 3. Ղազախ՝ գաւառով, 4. Արէշի գաւառ, 5. Ջիվանշէրի գաւառ). 20 պատգամաւոր։

7. ԲԱԳՎԱՑ ՇՐՋԱՆ. Կենտր. Բագու.

(Շրջանակներ.—1. Բագու, Ղուբա, Լենկօրան, Սալեան, 2. Շամախի՝ գաւառով, 3. Գեօքչայի գաւառ). 12 պատգամաւոր.

8. ԲԱԹՈՒՄԻ ՇՐՋԱՆ. Կենտր. Բաթում.

(Շրջանակներ.—1. Բաթում իր շրջանով, 2. Քութայիս՝ գաւառով, 3. Սուխումի շրջան, 4. Նովոռոսիյսկ շրջանով). 7 պատգ։

9. ԴԱՂԻՍՏԱՆԻ ՇՐՋԱՆ. Կենտր. Արմաւիր.

(Շրջանակներ.—1. Դէրբէնդ և Դաղստանի շրջան, 2. Արմաւիր, Եկատերինոդար. Մայկոպ, 3. Վլադիկավկազ, Ղլար, Պետրոսկ, Մոզդոկ շրջանով). 7 պատգամաւոր։

10. ՀԱՇՏԱՐԽԱՆԻ ՇՐՋ. Կենտ. Հաշտարխ.

(Շրջանակներ.—1. Հաշտարխան, Սարատ-

բոպոլ, Սարատով, Ցարիցին, (Սէբիր), 2. Ասխապատ և Թուրքեստանի շրջան). 3 պատգամաւոր։

11. ԲԵՍԱՐԱԲԻԱՑԻ ՇՐՋ. Կենտր. Նոր-Նախիջևան.

(Շրջանակներ.—1. Պեսարաբիա, Մոսկվա, Կիէվ, Խարկով, 2. Նոր-Նախիջևան գիւղերով և Ռոստով, 3. Քիշինէվ, Օդեսսա, Ակկերման, 4. Ղրիմ, Տաւրիկեան նահանգ). 8 պատգամաւոր։

Ընդամենը 11 շրջան, 46 շրջանակով և 185 պատգամաւոր։

ՕՐԱԿԱՐԳ

1. Վերաբերմունքը դէպի ներկայ քաղաքական ժամանակը, դէպի Ժամանակաւոր Կառավարութիւնը և դէպի պատերազմը։

2. Ռուսաստանի ապագայ քաղաքական կազմը։

3. Անդրկովկասի ապագայ քաղաքական կազմը և նրա կապը Ռուսաստանի հետ։

4. Փոքրամասնութեան իրաւունքը։

5. Հողային հարցը։ Գիւղացու տնտեսական վիճակը։

6. Լեզուների իրաւունքը պետական հիմնարկութիւնների մէջ։

7. Դպրոցական խնդիրներ. (պետական դպրոցների ազգայնացում, ազգային դպրոցներ, Լազարեան ճեմարան)։

8. Եկեղեցու փոխ-յարաբերութիւնը պետութեան հետ։

Դիւան Միջկուսակցական խորհրդակցութեան։

ՍՄ Հայագիտական գրադարան
MAL048778